ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2020-2022թթ.









2023թ. պետական բյուջեի նախագծով ՀՀ-ում, ՀՆԱ-ի 105% դեֆլյատորի պարագայում, կանխատեսվում է, որ անվանական ՀՆԱ-ն կկազմի 9 տրիլիոն 317.9 մլրդ դրամ: Ինչը նշանակում է, որ 2023 թվականին ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ 2022 թ. սպասողական ցուցանիշը կգերազանցի 12.3 %-ով, 2022 թ. պետական բյուջեում կանխատեսված ցուցանիշը կգերազանցի 18.4 %-ով, 2023-2025 թթ. ՄԺԾԾ-ով կանխատեսված ցուցանիշը կգերազանցի 2.8 %-ով, իսկ 2021 թվականի փաստացի մակարդակը կգերազանցի 33.4 %-ով:

ՀՆԱ-ի իրական աճը 2023թ. կանխատեսվում է 7 %, այնքան որքան ՄԺԾԾ-ով: 2022 թվականին սպասվում է 11% տնտեսական աճ՝ պետական բյուջեով կանխատեսված 7%-ի դիմաց: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը տնտեսական աճի 2023թ. կանխատեսվող ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ գործընկեր-երկրներից և Վրաստանից: ՀՀ-ում ՀՆԱ-ի 7 % իրական աճի պարարգայում, *ՌԴ-ում կանխատեսվում է ՀՆԱ-ի 2 % անկում, Ղազախստանում՝ ՀՆԱ-ի 4% իրական աճ, Ղրղզստանում՝ ՀՆԱ-ի 5 % իրական աճ, Վրաստանում՝ ՀՆԱ-ի 5.5 % իրական աճ և Բելառուսի Հանրապետությունում՝ ՀՆԱ-ի 1.5 % իրական աճ:

2023 թ. ՀՆԱ-ի աճին տնտեսության ճյուղերի նպաստման տեսանկյունից առաջատար է ծառայությունների ճյուղը՝ 4.3 %-ային կետ՝ 2022 թվականի պետական բյուջեով կանխատեսված 3 %-ային կետ աճի դիմաց: 2023 թ. ՀՆԱ-ի աճին դրականորեն են նպաստելու նաև արդյունաբերությունը՝ 1 %-ային կետ՝ 2022 թ. կանխատեսված 1.6 %-ային կետի դիմաց, շինարարությունը՝ 0.6 %-ային կետ՝ 2022 թ. կանխատեսված 1.2 %-ային կետ աճի դիմաց, զուտ անուղղակի հարկերը՝ 0.8 %-ային կետ՝ 2022 թ. կանխատեսված 0.7 %-ային կետ աճի դիմաց և գյուղատնտեսությունը 0.3 %-ային կետ՝ 2022 թվականի կանխատեսված 0.4 %-ային կետ աճի դիմաց:

*Աղբյուրը՝ file:///C:/Users/Room129%20User/Downloads/text-5.pdf









Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ ցուցանիշը 2023 թ.-ին կանխատեսվում է 39.9%՝ 0.6%-ային կետով պակաս քան սպասվում է 2022 թ., 4.8 %-այի կետով ավել 2021 թ. փաստացիից և 3 %-այի կետով ավել ԱԺԲԳ-ով կանխատեսված մակարդակից:

Ապրանքների և ծառայությունների ներմուծում/ՀՆԱ ցուցանիշը 2023 թ.-ին կանխատեսվում է 46.5 %՝ 2022թ. սպավող ցուցանիշից պակաս 0.7 %-ային կետով, 2021թ. փաստացի ցուցանիշից ավել 2.9 %-այի կետով և 0.9 %-ային կետով ավել ԱԺԲԳ-ով կանխատեսվածից:

Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը 2023 թ. կանխատեսվել է -6.6 %, որը 2.1 %-այի կետով պակաս է ԱԺԲԳ-ով կանխատեսվածից, գրեթե հավասար է 2022 թ. սպասողականին և 1.9 %-ային կետով բարելավել է 2021 թ. փաստացի մակարդակը:

2023 թվականին ընթացիկ հաշիվ / ՀՆԱ ցուցանիշը կանխատսվում է -6.1 տոկոսի մակարդակում, որը թեև 0.3 %-ային կետով բարելավում է ԱԺԲԳ-ով կանխատեսված մակարդակը, սակայն 1.6 %-ային կետով և 2.3 %-ային կետով վատթարացնում է համապատասխանաբար՝ 2022 թ. սպասողական և 2021թ. փաստացի ցուցանիշները:

Միջին գնաճը 2023 թ.-ին կանխատեսվում է 5.6%-ի մակարդակում, որը 2.5 %-ային կետով պակաս է 2022թ. սպասողականից, 1.6 %-ային կետով պակաս է 2021թ. փաստացիից, համապատասխանում է 2022թ. հաստատված մակարդակին, սակայն 0.6 %-ային կետով ավել է ԱԺԲԳ-ով կանխատեսվածից:

Գնաճը ժամանակաշրջանի վերջում 2023 թ.-ի համար կանխատեսվում է 3.6%՝ 4.9 %-ային կետով պակաս 2022թ. սպասողականից, 4.1%-ային կետով պակաս 2021թ. փաստացիից և 1.8 %-ային կետով պակաս ԱԺԲԳ-ով կանխատեսվածից:

2023 թ. պետական բյուջեի նախագծով՝

- եկամուտները ծրագրվել են 2 տրիլիոն 301.3 մլրդ դրամ, ինչը ԱԺԲԳ-ով կանխատեսված մակարդակը գերազանցում է շուրջ 2.1 %-ով, 2022թ. սպասողականից ավել է 12.7 %-ով և 2021 թ.փաստացիին գերազանցում է 36.7 %-ով,
- ծախսերը ծրագրվել են 2 տրիլիոն 590.2 մլրդ դրամ, ինչը ԱԺԲԳ-ով կանխատեսված մակարդակը գերազանցում է 1.7 %-ով, 2022թ. սպասողականից ավել է 15.3 %-ով և 2021 թ.փաստացիին գերազանցում է 29.2 %-ով,
- դեֆիցիտը ծրագրվել է 288.9 մլրդ դրամ, ինչը ԱԺԲԳ-ով կանխատեսված մակարդակից պակաս է 1.1 %-ով, 2022թ. սպասողականից ավել է 41.5 %-ով, իսկ 2021 թ.փաստացիից պակաս է 9.9 %-ով:

ԱԺԲԳ









2023 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 24.7 %, որը 2022թ. սպասողականից բարձր է 0.1 %-ային կետով, ՄԺԾԾ-ով 2023 թ. համար ծրագրված մակարդակից պակաս է 0.2 %-ային կետով, իսկ 2021թ. փաստացի մակարդակից ավել է 0.6 %-ային կետով:

2023 թ. պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 27.8 %, որը 2022թ. սպասողականից ավել է 0.7 %-ային կետով, ՄԺԾԾ-ով 2023 թ. համար ծրագրված մակարդակից պակաս է 0.3 %-ային կետով, իսկ 2021թ. փաստացի մակարդակից պակաս է 0.9%-ային կետով:

2023 թ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը ծրագրվել է -3.1%՝ 0.6 %-ային կետով վատթարացնելով 2022 թ. սպասողական ցուցանիշը, 1.5 %-ային կետով ու 0.1 %-ային կետով բարելավելով, համապատասխանաբար՝ 2021 թ. փաստացի և ՄԺԾԾ-ով ծրագրված ցուցանիշները:

2023 թ. պետական բյուջեի նախագծով եկամուտները ձևավորվելու են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 2 տրիլիոն 203.7 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2023 թ. համար սահմանված մակարդակի 101.3 %-ը, 2022թ. սպասողականը կգերազանցի 14.7%-ով, իսկ 2021թ. փաստացին կգերազանցի՝ 38.9%-ով,
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 17.1 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2023 թ. համար սահմանված մակարդակի 86.8 %-ը, 2022թ. սպասողականից պակաս է 61.7 %-ով, սակայն 2021 թ. փաստացիից ավել է 37.9%-ով,
- այլ եկամուտներից՝ 80.5 մլրդ դրամ, որը ՄԺԾԾ-ով 2023 թ. համար սահմանված մակարդակը կգերազանցի 39.5 %-ով, 2022թ. սպասողականը կգերազանցի 3.3 %-ով, իսկ 2021թ. փաստացիից պակաս կլինի 4.8 %-ով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2023թ. պետական բյուջեի նախագծով կանխատեսվում է 23.7 %, ինչը 2022 թ. սպասողական ցուցանիշը գերազանցում է 0.5 %-ային կետով, ՄԺԾԾ-ով 2023 թ. համար սահմանված մակարդակից պակաս է 0.3 %-ային կետով, իսկ 2021թ. փաստացի մակարդակց մեծ է 1 %-ային կետով:

2023 թ. պետական բյուջի նախագծով ընթացիկ ծախսերը ծրագրվել են 2 տրիլիոն 42.5 մլրդ դրամ՝ 10 %-ով ավել քան սպասվում է 2022թ.-ին, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 547.7 մլրդ դրամ, 40.5 %-ով ավել 2022թ. սպասվածից:









2023 թ. պետական բյուջեի նախագծում՝

- ընթացիկ ծախսերը ծրագրված են ՀՆԱ-ի 21.9%-ը՝ 2022թ. սպասվող 22.4 %-ի և 2021թ. փաստացի 25.6 %-ի դիմաց,
- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը), որոնք ծրագրված են 557.7 մլրդ դրամ կազմում են ՀՆԱ-ի շուրջ 6 %-ը՝ 2022 թ.-ին սպասվող 4.8 %-ի և 2021թ. փաստացի 3.1 %-ի դիմաց:

2023 թ. պետական բյուջեի նախագծում՝

- 508.2 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, որը 18.2%-ով ավել է 2022թ. պետական բյուջեով հաստատվածից և 33.4 %-ով ավել է քան 2021թ. փաստացին էր,
- 240.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել տնտեսական հարաբերությունների բաժնին, որը 13.9%-ով ավել է 2022թ. հաստատված մակարդակից և 58.7 %-ով ավել է 2021թ. փաստացիից,
- 509 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել պաշտպանության բնագավառին, որը 46.7 %-ով ավել է 2022թ. հաստատված ցուցանիշից և 51.5 %-ով ավել է 2021թ. փաստացիից: Ընդ որում, 2023 թ. պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 5.5 %-ը՝ 2022թ. հաստատված 4.4 %-ի և 2021 թ. փաստացի՝ 4.8 %-ի դիմաց,
- 199.6 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին, որը 16.3 %-ով ավել է 2022թ. հաստատված մակարդակից և 24.7 %-ով ավել է քան 2021թ. փաստացին է,
- 9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել շրջակա միջավայրի պաշտպանությանը, որը 8 %-ով պակաս է 2022թ. հաստատվածից, բայց 49.1 տոկոսով գերազանցում է 2021թ. փաստացիին,
- 17.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին, որը 11.5 %-ով ավել է 2022թ. հաստատված մակարդակից և 87.3 %-ով գերազանցում է 2021թ. փաստացիին,
- 149.1 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել առողջապահությանը, որը 21.7 %-ով ավել է 2022թ. հաստատվածից, բայց 7.1 %-ով պակաս է 2021թ. փաստացիից,
- 648.5 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել սոցիալական պաշտպանությանը, որը 11.6 %-ով ավել է 2022թ. հաստատվածից և 4.6 %-ով ավել է քան 2021թ. փաստացին է:

ԱԺԲԳ









2023 թ. պետական բյուջեի նախագծում՝

- 212.2 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել կրթության բնագավառին, որը 9.9 %-ով ավել է 2022թ. համար հաստատված և 42.3 %-ով ավել է 2021թ. փաստացի մակարդակներից,
- 36.3 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին, որը 10.7 %-ով ավել է քան հաստատվել էր 2022թ. պետական բյուջեով և 19.3 %-ով գերազանցում է 2021թ. փաստացի մակարդակը,
- 59.5 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր բաժնին:

2023 թ. պետական բյուջեի նախագծով, կանխատեսվում է՝

- ՀՀ պետական պարտքը կկազմի 4 տրիլիոն 879 մլրդ դրամ, որը 2.1 %-ով պակաս է 2022թ. պետական բյուջեով կանխատեսվածից և 10.1 %-ով ավել է 2021 թ. փաստացիից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 2 տրիլիոն 962 մլրդ դրամ, որը 15.2 %-ով պակաս է 2022թ. համար հաստատվածից և 7.2 %-ով պակաս է 2021թ. փաստացիից;
- ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 1 տրիլիոն 917 մլրդ դրամ, որը 28.4 %-ով ավել է 2022թ. հաստատվածից և 54.9 %-ով ավել է քան 2021թ. փաստացին էր,
- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կկազմի 12 միլիարդ 55.8 մլն , որը 15.4 %-ով ավել է 2022թ. հաստատվածից և 30.7 %-ով ավել է 2021թ. փաստացիից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 7 մլրդ 319 մլն ԱՄՆ դոլար, որը համապատասխանում է 2022թ. համար հաստատված մակարդակին և 10.1 %-ով ավել է քան 2021թ. փաստացին էր,
- ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 4 մլրդ 736.8 մլն ԱՄՆ դոլար՝ 51.5 %-ով ավել 2022թ. հաստատվածից և 83.8 %-ով ավել 2021թ. փաստացիից,
- ՀՀ կառավարության պարտքը կկազմի 4 տրիլիոն 625.2 մլրդ դրամ, որը 11.8 %-ով պակաս է քան ծրագրվել է ՄԺԾԾ-ով, 2.4 %-ով պակաս է 2022թ. հաստատվածից և 9.9 %-ով ավել է 2021թ. փաստացիից,
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կկազմի 254 մլրդ դրամ, որը 3.7 %-ով ավել է քան կանխատեսվել էր 2022թ. համար և 15.5 %-ով ավել է 2021 թ. փաստացիից,

2023 թվականի ՀՀ պետական պարտքի ցուցանիշը, որն արտահայտված են ԱՄՆ դոլարով հաշվարկվել է հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում կանխատեսված 1 ԱՄՆ դոլար= 404.7 դրամ հարաբերակցությունը:

ԱԺԲԳ









- ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 10 մլրդ 595 մլն, որը 6.7 %-ով ավել է 2022 թ. հաստատվածից և 20.8%-ով գերազանցում է 2021թ. փաստացիին,
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 627.6 մլն, որը 22.3 %-ով ավել է 2022 թ. հաստատվածից և 37.1%-ով գերազանցում է 2021թ. փաստացիին,
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կկազմի 2 տրիլիոն 708 մլրդ դրամ, որը 21.3 %-ով պակաս է ՄԺԾԾ-ով ծրագրված մակարդակից, 16.6 %-ով պակաս է 2022 թ. հաստատվածից և 8.9 %-ով պակաս է 2021թ. փաստացիից,
- ՀՀ կառավարության ներքին պարտքը կկազմի 1 տրիլիոն 917 մլրդ դրամ, որը 6.3 %-ով գերազանցում է ՄԺԾԾ-ով ծրագրվածին, 28.4 %-ով ավել է 2022 թ. հաստատվածից և 54.9 %-ով ավել է 2021թ. փաստացիից,
- ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կանխատեսվում է 52.4 %-ի մակարդակում, որը 11 %-ային կետով պակաս է 2022 թ. հաստատվածից և 2021 թ. փաստացիից,
- ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կանխատեսվում է 31.8 %, որը 12.6 %-ային կետով պակաս է քան ծրագրվել էր 2022թ. համար և 13.9 %-ային կետով պակաս է 2021թ. փաստացիից;

2023 թվականի ՀՀ կենտրոնական բանկի պարտքի ցուցանիշը, որն արտահայտված է ԱՄՆ դոլարով հաշվարկվել է հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում կանխատեսված 1 ԱՄՆ դոլար= 404.7 դրամ հարաբերակցությունը:

ԱԺԲԳ

ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ(%)



ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ(%)



- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 49.6 %, որը 10.6 %-ային կետով պակաս է քան կանխատեսվել էր 2022 թ. համար, 8.3 %-ային կետով պակաս է քան կանխատեսվել է ՄԺՍՍ-ով և 10.7 %-ային կետով պակաս է 2021թ. փաստացի մակարդակից,
- ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 29.1 %, որը 12.2 %-ային կետով պակաս է 2022 թ. համար հաստատվածից և 13.5 %-ային կետով պակաս է 2021թ. փաստացիից:
- ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքը կկազմի 41.4 %՝ 9.9 տոկոսային կետով ավել քան 2022 թ. համար հաստատվածն է և 11.9 տոկոսային կետով ավել 2021թ. փաստացիից:

ՀՀ կառավարության ներքին պարտք/ՀՆԱ (%)





*Տեղեկատվության աղբյուրներն են՝ ՀՀ 2020-2021թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, ՀՀ 2022 թ. հաստատված պետական բյուջեն, ՀՀ 2023 թ. պետական բյուջեի նախագիծը, 2023-2025 թթ. ՄԺՍՍ-ն, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները և Արժույթի միջազգային հիմնադրամի հոկտեմբեր ամսվա զեկույցը՝ Համաշխարհային տնտեսական հեռանկարների վերաբերյալ: